ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Ք. ՉԱՐԵՆՑԱՎԱՆ

10.07.2019Թ.

Համայնքի ավագանու նիստի աշխատանքների ներկա են ավագանու 9 անդամները:

Բացակայում են Մ.Գասպարյանը, Տ. Եփրեմյանը,Ն.Վարդանյանը, Գ.Երիցյանը, Հ.Գրիգորյանը, Ս.Վարդանյան:

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում են՝
Համայնքի ղեկավարի տեղակալ Վ. Չիլինգարյանը, աշխատակազմի քարտուղարի Ս.Մուրադյանը, համայնքապետարանի աշխատակազմի բաժնի պետեր Վ.Բարսամյանը, Բ. Բալբաբյանը , Ա. Ծերունյանը և գյուղերի վարչական ղեկավարները:
Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան

Ձեզ եմ ներկայացնում համայնքի ավագանու թիվ 5 արտահերթ նիստի օրակարգը՝

1. Չարենցավան համայնքի 2019 թվականի բյուջեի 2-րդ եռամսյակի եկամուտների և ծախսերի կատարողականի հաղորդման մասին:
2. Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) հատվածից գումար հատկացնելու մասին:
3. Չարենցավան համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 14-ի թիվ 87-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:
4. Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող գույքը աճուրդային եղանակով օտարելու թույլտվություն տալու մասին:
5. Քաղաքացիներ Սիմոն Խաչատուրյանին, Էթել Գաբրիելյանին, Ռոբերտ Իսկանդարյանին, Արթուր Արշամյանին, Կարեն Վիրաբյանին, Հաթիկ Սիմոնյանին և Գրիգոր Հովսեփյանին հողի հարկի արտոնություն տալու մասին:
6. Չարենցավան համայնքի 2019 թվականի հողային հաշվեկշիռը հաստատելու մասին:
7. Չարենցավան խոշորացված համայնքում իրականացվող Հայաստանի Տարածքային Զարգացման հիմնադրամի համաֆինանսավորման՝ ծրագրի արժեքի 5%-ի չափի մասին:

Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան

Եթե առարկություններ չկան, քվեարկության եմ դնում որոշումը օրակարգային հարցի վերաբերյալ:

Կողմ -9 դեմ - 0 ձեռնպահ -0

Օրակարգն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

1. ***Չարենցավան համայնքի 2019 թվականի բյուջեի 2-րդ եռամսյակի եկամուտների և ծախսերի կատարողականի հաղորդման մասին:***

/Զեկ. Գ.Աֆյան/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի ***առաջարկում եմ*** ի գիտություն ընդունել Չարենցավան համայնքի 2019 թվականի բյուջեի 2-րդ եռամսյակի եկամուտների և ծախսերի կատարողականի մասին համայնքի ղեկավարի հաղորդումները (կցվում է):

Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ-9 **դեմ - 0** **ձեռնպահ -0**

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

2. ***Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) հատվածից գումար հատկացնելու մասին:***

Հաշվի առնելով Չարենցավան համայնքի Չարենցավան քաղաքի 8-րդ թաղ., 12 շենքի 32 հասցեի բնակիչ ***Ալիկ Սահակյանի*** 2019 թվականի հուլիսի 04-ի թիվ 2127-16, դիմումը ֆինանսական աջակցություն հատկացնելու մասին, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով՝ ***առաջարկում եմ*** Չարենցավան համայնքի սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) 4729 «Այլ նպաստներ բյուջեից» սինթետիկ հաշվից 100.0 հազ. դրամ հատկացնել ***Ալիկ Սահակյանին:***

Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ-9 **դեմ - 0** **ձեռնպահ -0**

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

3.Չարենցավան համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 14-ի թիվ 87-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:

/Զեկ. Գ.Աֆյան/

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի դրույթներով՝ հաշվի առնելով կրթ., մշ., սպ. երիտ. և սոց. աջակցության բաժնի պետ Ա. Զաքարյանի 2019 թվականի հունիսի 25-ի թիվ 1933/04, քաղ., ճարտ.,գյուղ. և բնակկոմ. տնտես. բաժնի պետ Բ. Բալբաբյանի 2019 թվականի հունիսի 26-ի թիվ 1962/04, թիվ 1963/04, հունիսի 28-ի թիվ 2047/04, հուլիսի 02-ի թիվ 2099/04, 2100/04, «Նարե-99» համատիրության կառավարիչ Ս.Ստեփանյանի 2019 թվականի հունիսի 28-ի թիվ 2028/04, «Անդրանիկ» համատիրության կառավարիչ Վ.Բաբայանի 2019 թվականի հունիսի 28-ի թիվ 2021/04 զեկուցագրերը. ***առաջարկում եմ*** կատարել լրացումներ և փոփոխություններ 2019 թվականի հաստատված բյուջեում:

<u>Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան</u>

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ-9 դեմ - 0 ձեռնպահ -0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

4.Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող գույքը աճուրդային եղանակով օտարելու թույլտվություն տալու մասին:

/Զեկ. Բ.Բալբաբյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, հիմք ընդունելով ՀՀ Առևտրաարդյունաբերական պալատ «Արմէքսպերտիզա» ՍՊԸ-ի գնահատման հաշվետվությունը ՝ ***առաջարկում եմ*** թույլատրել Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող անշարժ գույքը՝ 6-րդ թաղամասի 26-րդ շենքի թիվ 4 հասցեում գտնվող 70.4քմ ընդհանուր մակերեսով շինությունը աճուրդային եղանակով օտարելու համար :Շինության մեկնարկային գինը սահմանել 2 800 000 (երկու միլիոն ութ հարյուր հազար) ՀՀ դրամ:

<u>Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան</u>

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ-9 դեմ - 0 ձեռնպահ -0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

5. Քաղաքացիներ Սիմոն Խաչատուրյանին, Էթել Գաբրիելյանին, Ռոբերտ Իսկանդարյանին, Արթուր Արշամյանին, Կարեն Վիրաբյանին, Հաթիկ Սիմոնյանին և Գրիգոր Հովսեփյանին հողի հարկի արտոնություն տալու մասին:

/Զեկ. Բ.Բալբաբյան/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հունիսի 22-ի N 822-Ն որոշմամբ սահմանված կարգի 5-րդ և 6-րդ կետերի պահանջներով, Հողի հարկի մասին օրենքի 10-րդ հոդվածով և հաշվի առնելով քաղաքացիների դիմումները.***առաջարկում եմ*** քաղաքացիներ Սիմոն Խաչատրյանին, Էթել Գաբրիելյանին, Ռոբերտ Իսկանդարյանին, Արթուր Արշամյանին, Կարեն Վիրաբյանին, Հաթիկ Սիմոնյանին և ԳրիգորՀովսեփյանին՝ որպես նոր հիմնված խնձորի այգիների սեփականատերեր, չորս տարի ժամկետով ազատել հողի հարկի պարտավորությունից, նկատի ունենալով, որ այդ այգիներո ամբողջովին բերքատու կլինեն 3-5 տարի հետո /ըստ ագրոտեխնիկական ցուցանիշների/:

Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ-9 **դեմ - 0** **ձեռնպահ -0**

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

6.Զարենցավան համայնքի 2019 թվականի հողային հաշվեկշիռը հաստատելու մասին:

/Զեկ. Բ.Բալբաբյան/

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության հողային հաշվեկշիռը կազմելու կարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի հոկտեմբերի 23-ի թիվ 656 որոշման պահանջներով՝ ***առաջարկում եմ*** հաստատել Զարենցավան համայնքի 2019 թվականի հողային հաշվեկշիռը՝ համաձայն հավելվածի/կցվում է/:

Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ-9 **դեմ - 0** **ձեռնպահ -0**

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

7.Զարենցավան խոշորացված համայնքում իրականացվող Հայաստանի Տարածքային Զարգացման հիմնադրամի համաֆինանսավորման՝ ծրագրի արժեքի 5%-ի չափի մասին:

/Զեկ. Վ.Զիլինգարյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 18-րդ հոդվածի 42-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Տարածքային Զարգացման Հիմնադրամի սոցիալական ներդրումների և տեղական զարգացման ծրագրի երկրորդ բաղադրիչի ուղեցույցը՝ ***առաջարկում եմ.*** տալ համաձայնություն Զարենցավան խոշորացված համայնքում իրականացվող Հայաստանի Տարածքային Զարգացման Հիմնադրամի համաֆինանսավորման՝ ծրագրի արժեքի 5%-ի չափի մասին:

<u>Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան</u>

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ-9 **դեմ-0** **ձեռնպահ-0**

Բաբայան Նարեկ

Բաբայան Վալերի

Գասպարյան Անատոլի

Դավթյան Կարեն

Խլղաթյան Արսեն

Վարդանյան Նորայր

Պողոսյան Մնացական

Սահակյան Երեմ

Փանոսյան Արթուր

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Նիստն արձանագրեց Ս.Մուրադյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Հ.Կ.ՇԱՀԳԱԼԴՅԱՆ**